

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի « Ծաղկուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիա և կենսաբանություն առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Ուսուցչի թափուր տեղի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է/Ձև 1 /,

2. Փաստաթուղթ/դիպլոմ/ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26 -րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն/Ձև 4/,

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները/դրանց առկայության դեպքում/,

6. Մեկ լուսանկար 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2018թ. հոկտեմբերի 30 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 -ից 15:00 -ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2018թ. նոյեմբերի 2 -ին՝ ժամը 13:00-ին, Շիրակի մարզի Ծաղկուտի միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ գ. Ծաղկուտ փողոց 2, շենք

№3 :

Տեղեկությունների համար զանգահարել 094135661 հեռախոսահամարով: <<Ծաղկուտի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի

գործադիր տնօրեն՝  Վ. Պողոսյան

